ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անուն ազգանուն, զբաղեցրած պաշտոն**

   Լենա Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ

   Մարիա Հովակիմյան – ՀՀ առողապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության խորհրդական

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, ս.թ. փետրվարի 26-28 (Լենա Նանուշյան), ս.թ. փետրվարի 26-մարտի 3 (Մարիա Հովակիմյան)

3. **Հրավիրող կողմը**

   Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

4. **Գործուղման նպատակը**

   Մասնակցություն ԱՀԿ միջկառավարական բանակցային մարմնի (INB) չորրորդ հանդիպմանը

5. **Քննարկված թեմաները**

Նիստի ընթացքում համավարակներին պատրաստվածության և արձագանքման շուրջ ԱՀԿ կոնվենցիայի, համաձայնագրի կամ այլ միջազգային փաստաթղթի մշակումը: ԱՀԿ անդամ-պետությունների քաղաքական ղեկավարության ներկայացուցիչներն ու ոլորտային փորձագետները քննարկել են հետագա համավարակները արդյունավետ կերպով կանխելու և դրանց լավագույնս դիմակայելու հարցում հնարավոր լուծումները:

Բանակցային մարմնի քարտուղարությունը փետրվարին անդամ-պետությունների դիտարկմանն էր ներկայացրել փաստաթղթի զրոյական նախագիծը, որի հիման վրա մեկնարկեցին լրամշակման աշխատանքները: Առաջիկայում նախատեսվում են մի շարք նմանատիպ հանդիպումներ, որոնց ընթացքում այս գործընթացը կշարունակվի:

Նիստի ընթացքում անդամ-պետությունների համար նաև անցկացվեց ճեպազրույց՝ ս.թ. սեպտեմբերին ՄԱԿ գլխավոր վեհաժողովի ընթացքում ոչ վարակիչ հիվանդությունների, տուբերկուլոզի դեմ պայքարի և Առողջապահության համընդհանուր ծածկույթի ապահովման վերաբերյալ կայանալիք 3 բարձրաստիճան հանդիպումների վերաբերյալ:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Լենա Նանուշյանն իր ելույթում հիշատակել է ՄԱԿ գլխավոր քարտուղարի 2020 թվականի կոչը՝ համավարակների ժամանակ համաշխարհային հրադադարի վերաբերյալ և առաջարկել համաձայնագրով սահմանել համավարակների ժամանակ հրադադար հաստատելու դրույթ ներառել:

Նա առաջարկել է փաստաթուղթը կառուցել «կանխարգելում-պատրաստություն-արձագանք-վերականգնում» տրամաբանությամբ: Նաև կոչ է արել շեշտադրել համավարակների կանխարգելմանը վերաբերող դրույթները՝ որպես համավարակների դեմ պայքարի կարևորագույն միջոցառում: Այս շրջանակում Լենա Նանուշյանն ընդգծել է Առողջության առաջնային պահպանման օղակի վերաբերյալ դրույթների ներառումը և ապատեղեկատվության դեմ պայքարի կարևորությունը:

Հայկական կողմը պատրաստակամություն է հայտնել մասնակցելու հետագա բանակցային գործընթացին՝ փաստաթուղթն առավել համապարփակ դարձնելու նպատակով:

Փաստաթղթի բուն լրամշակման ընթացքում հայկական կողմը հնչեցրել է իր առավել նեղ առաջարկությունները փաստաթղթի անկյունաքարային դրույթների շուրջ:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպմանն ի ամփոփում՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Բանակցային մարմնի ղեկավար կազմը կկազմակերպի ոչ պաշտոնական միջխորհրդարանական աշխատանք՝ համապատասխան շահագրգիռ կողմերի

մասնակցությամբ, զրոյական նախագծի մի շարք խնդրահարույց դրույթների պարզաբանման շուրջ՝ ս.թ. ապրիլի 3-6-ը կայանալիք ԱՀԿ միջկառավարական բանակցային մարմնի (INB) 5-րդ հանդիպմանն ընդառաջ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

9 մարտի, 2023թ.

09.03.2023

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164